ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. հունիսի 19-ից 25-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն և Նիդերլանդների Թագավորություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Անի Իսպիրյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ հունիսի 19-ից 22-ը, Նիդերլանդների Թագավորություն՝ հունիսի 23-ից 25-ը

4. Հրավիրող կողմը՝

Կանաչ կլիմայի հիմնադրամ

5. Գործուղման նպատակը՝

«Scaling up green finance practices in Armenia» դրամաշնորհային ծրագրի շրջանակում «կանաչ ֆինանսավորման» ոլորտում միջազգային լավագույն, մասնավորապես՝ առաջատար եվրոպական ֆինանսական կառույցների (Վերականգնման վարկերի բանկ, KfW և Նիդերլանդների ձեռնարկատիրական զարգացման բանկ, FMO) կողմից իրականացվող ծրագրերին և կանաչ պարտատոմսերին առնչվող փորձի ուսումնասիրություն և վերջինիս հնարավոր տեղայնացումը Հայաստանի Հանրապետությունում:

6. Քննարկված թեմաները՝

Կանաչ և կայուն ֆինանսավորման, կանաչ պարտատոմսերի, Վերականգնման վարկերի բանկի (KfW) և Նիդերլանդների ձեռնարկատիրական զարգացման բանկի (FMO) կողմից իրականացվող ծրագրերում, այդ թվում՝ բնապահպանական և սոցիալական ռիսկերի հնարավոր նվազեցմանն ու կառավարմանն առնչվող հարցերի դիտարկում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Այցելություն Գերմանիայի Դաշնային Հանրապետության Ֆրանկֆուրտ քաղաքի «Aktiv-Stadthaus» ամենաէներգաարդյունավետ բնակելի համալիր՝ շենքերի էներգաարդյունավետության ոլորտի զարգացմանը, դրանց արդիականացմանն ուղղված ներդրումային ռիսկերի նվազեցման գործընթացներին ու մեխանիզմներին ծանոթանալու նպատակով:

Նիդերլանդների Թագավորության Հաագա քաղաքում հանդիպում Նիդերլանդների ձեռնարկատիրական զարգացման բանկի (FMO) ներկայացուցիչների հետ՝ կառույցի կողմից իրականացվող աշխատանքներին, այդ թվում՝ ֆինանսավորման գործիքներին, ներդրումային ուղղություններին ծանոթանալու նպատակով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում որոշումներ չեն կայացվել:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

29.06.2022